Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ Ք. ՄԱԴՐԻԴ (ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ) ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անուն, ազգանուն.

Արտուր Մովսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Իսպանիայի Թագավորություն, ք. Մադրիդ, 20-23 նոյեմբերի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը.

Իսպանիայում ՀՀ դեսպանություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների անդրանիկ համաժողովին

6. Քննարկված թեմաները.

- արտերկրում գործող հայագիտական կենտրոնների դերը և նշանակությունը հայագիտության զարգացման գործում,
- հայագիտական կենտրոնների ընդլայնման ուղղված ՀՀ քաղաքականությունը,
- Մադրիդի Կոմպլյուտենս համալսարանում գործող հայագիտական ամբիոնի գործունեության կարևորությունը,
- հայագիտության ոլորտում առկա խնդիրները, զարգացման ուղիները և համագործակցության հեռանկարները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների անդրանիկ համաժողովին, որի առանցքային քննարկման թեման է եղել արտերկրում գործող հայագիտական կենտրոնների դերը և նշանակությունը հայագիտության զարգացման գործում: Համաժողովի ընթացքում ներկայացվել է հայագիտական կենտրոնների զարգացմանն ուղղված ՀՀ քաղաքականությունը և այս ուղղությամբ արդեն իսկ գրանցված հաջողությունները և ձեռքբերված արդյունքները,

մասնավորապես, այս պահին 13 երկրի 15 համալսարաններում գործում են հայագիտական կենտրոններ:

Համաժողովի ընթացքում հանդես եմ եկել ելույթով, որտեղ նշել եմ առաջիկայում հայագիտության զարգացման ռազմավարություն մշակելու և վերջին տարիներին գիտության ոլորտին տրամադրվող պետական բյուջեի շոշափելի միջոցների թվում հայագիտական կենտրոններին տրամադրվող գումարների վերաբերյալ:

Համաժողովի ընթացքում քննարկվել են նաև հայագիտության ոլորտում առկա խնդիրները, զարգացման ուղիները և համագործակցության հեռանկարները ինչպես ՀՀ կառույցների, այնպես էլ օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների միջև: Համաժողովին ներկա Վենետիկի, Հռոմի, Զալցբուրգի, Լայպցիգի, Սինալոայի, Թրակիայի Դեմոկրիտի, Քենեդիի, Ռոսարիոյի, Հալլե-Վիթենբերգի Մ. Լյութերի անվան և մի շարք այլ օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների ղեկավարները ներկայացրել են սահիկաշարեր՝ նվիրված իրենց ամբիոնների, կենտրոնների գործունեությանը և իրականացված ծրագրերին:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումներ և պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Համաժողովի ընթացքում կարևորվել է հայագիտության ոլորտի զարգացմանն ուղղված շարունակական քայլերի իրականացումը, այդ թվում՝ միջհամալսարանական համագործակցության շրջանակում հայագիտության ընդլայնմանն ուղղված ծրագրերի, հետազոտական աշխատանքների, հայագիտական միջազգային գիտաժողովների և կրթամշակութային միջոցառումների իրականացման միջոցով:

27 նոյեմբերի, 2024 թվական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ